

**Մարիամ Մ. Կարապետյան**  
*Բանասիր. գիտ. թեկնածու*

## **ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՊԱՏՄԵԼԸ**

Որպես սոցիալ-հումանիտար միջնորդություն\*

**Բանալի բառեր** – գիտական լրագրություն, բնական գիտություններ, սոցիալ-հումանիտար միջնորդություն, սոցիալ-հումանիտար պրակտիկա, գիտական գիտելիք, ոչ գիտական գիտելիք, գիտության հասարակականացում, պատումային գիտելիք, ոչ պատումային գիտելիք, գիտության օրինավորում:

### Մուտք

Մեզանում գիտության զարգացման անհրաժեշտության վերաբերյալ զրույցները պարբերաբար ակտիվանում են՝ զուգորդվելով Հայաստանի տեխնոլոգիական ապագայի, համաշխարհային նշանակության հարցերում իր ներդրումներով արժեքավոր պետություն դառնալու անհրաժեշտության, պետության պաշտպանական համակարգը նոր գինտելինիկայով համալրելու թեմաների հետ:

Գիտության կարևորության թեման Հայաստանում հերթական անգամ, բայց կարծես ավելի մեծ թափով ակտիվացավ 2020 թ. պատերազմից հետո՝ նախ որպես տեխնոլոգիական զարգացման կենսական անհրաժեշտության հարց: Թեմայի «ծագումնաբանությունը» արդեն մի կողմից՝ առանձին հարցերի հետք է բացում, մյուս կողմից՝ ընդհանրացման համար պիտանի համատեքստ է հուշում. **պատերազմի ստեղծած ազգային-պետական խոր ձգնաժամը մղում է վերամտածելու գիտությունների, այդ թվում նաև՝ «պատերազմին**

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 27.05.2022:

## **սպասարկող» գիտության հնարավորության բոլոր հանգամանքները:**

Գիտության դերի ու զարգացման ուղիների մասին քննարկումներում քննադատությունների ու ակնկալիքների սլաքը, իհարկե, առաջին հերթին ուղղում են պետությանը՝ ակնկալելով գիտության ոլորտի ֆինանսավորման էական մեծացում: Հիմնական հասցեատիրոջից բացի, սակայն, կարելի է տեսնել նաև ոլորտի կայացման այլ հնարավոր մասնակիցների՝ հաճախ պակաս ակնհայտ ու պակաս որոշակի գործառույթներով: Սույն հոդվածն անդրադառնում է գիտական լրագրությանը՝ դրա գործառույթը քննելով իբրև գիտությունների և հասարակության միջև **սոցիալ-հումանիտար միջնորդություն**: Չանդրադառնալով այն հանգամանքին, որ գիտության վերաբերյալ քննարկումներում այն հասկանալիորեն նույնացվում է բնական և հատկապես տեխնիկական գիտություններին առնչվող խնդիրներին, հոդվածում բնական-տեխնիկական գիտությունների ներկայացումը մեղիալում քննվում է որպես **սոցիալ-հումանիտար պրակտիկա**՝ որոնելով դրա եղանակները և հնարավոր հանձնառությունները:

### 1. Ինչո՞ւ պատմել հասարակությանը գիտության մասին

Հոդվածի հիմնական հարցադրման համար մեկնարկային կարևորություն ունի **գիտության սոցիալականացման** հարցը: Ի՞նչն է, որ ձևավորում է գիտության սոցիալականացման անհրաժեշտության ըմբռնումը: Ըստ Սթենֆորդի փիլիսոփայական հանրագիտարանի՝ գիտական գիտելիքի սոցիալական կողմերի ուսումնասիրությունն ընդգրկում է գիտական հետազոտության ազդեցությունները մարդկանց կյանքի և սոցիալական հարաբերությունների վրա, սոցիալական հարաբերությունների և արժեքների ազդեցությունները գիտական հետազոտության վրա և ինքնին հետազոտության սոցիալական կողմերը: Այս հարցերը բազմաթիվ գործոնների համախմբման հետևանքով են նկատելի դարձել գիտության փիլիսոփայության համար: Նման գործոններ են սոցիալական շարժումների, ինչպես, օրինակ, ֆեմինիզմի և բնապահպանական շարժումների ի հայտ գալը, գիտահեն տեխ-

նուրգիաների սոցիալական ազդեցությունների մասին մտահոգությունները և այլն<sup>1</sup>:

Գիտության սոցիալականության հարցը իմացաբանությանը հղելը փիլիսոփայական լրացում կլիներ մեր որոնումներին: Այստեղ, սակայն, այս կարևոր լրացումը շեղում կհամարենք և չենք գնա այդ ուղղությամբ: Մեզ այլ բան է հուզում. գիտության սոցիալականության հարցը՝ որպես **գիտության արդիականության հարց** և **գիտության սոցիալական նշանակության հարց**, նաև լրագրողներին է:

Գիտության ոլորտների լուսաբանման դերը քննարկելիս գիտության սոցիալականության մասին միտքը ներկայանում է նախ իբրև հարց գիտության հանրայնացման կարևորության մասին, այն է՝ ինչի՞ համար պիտի գիտության մասին տեղեկանա հասարակությունը՝ հանուն գիտական արդյունքի սպառման, հանուն գիտության մեջ նոր սերնդի ներգրավման և այլն:

Գիտության սոցիալականացումը մեդիայի միջոցով, գիտության հանրայնացումից բացի, կարող է նշանակել նաև, օրինակ, դիտարկել գիտությունը որպես թեմա, թեմատիկ ոլորտ և հարց մեդիայի լուսաբանած այլ սոցիալական հարցերի շարքում, այն է՝ ինչպե՞ս են հասարակական դառնում գիտությանը վերաբերող տարբեր հարցեր՝ հայտնվելով տեղեկատվամիջոցների օրակարգերում: Գիտության ոլորտի զարգացումներն ու խնդիրները լուսաբանվում են մեդիայում որպես սոցիալական հարց, սոցիալական խնդիր, և այստեղ հետաքրքրություն է ներկայացնում մասնավորապես այն, թե ինչն ինչպես է խնդրականանում՝ լուսաբանվելով մեդիայում. ո՞վ է որոշում կոնկրետ ինչն է խնդիր, ինչպե՞ս են լուսաբանվում խնդիրները. մեկնաբանվո՞ւմ են, խմբավորվո՞ւմ են, աստիճանակարգ կազմո՞ւմ են և այլն:

Ըստ այսմ՝ հոդվածում ներկայացվող երկու առանցքային հարցերի առնչությունը սխեմատիկ կերպով կարելի է բնորոշել նաև հետևյալ կերպ՝ **գիտական լրագրությունը՝ գիտության սոցիալականացման դեպք, և գիտության՝ սոցիալական հարց չդառնալու կամ դառնալու այս կամ այն եղանակը՝ սոցիալ-հումանիտար խնդիր:**

<sup>1</sup> St'u Longino H., The Social Dimensions of Scientific Knowledge, <https://plato.stanford.edu/entries/scientific-knowledge-social/> (մուտք 20.08.2021):

## 2. Սոցիալ-հումանիտար միջնորդությունը՝ գիտական լրագրության առնչությամբ

Մեդիայի միջոցով գիտության հանրայնացման ամենից աչքի ընկնող օրինակը «Բուն TV»-ի փորձն է՝ տարբեր ոլորտներ ներկայացնող մասնագետների տեսադասախոսություններ, զրույցներ, թեմատիկ շարքեր: Պատահակա՞ն է արդյոք, որ առաջին հայկական «գիտամասնագիտական» առցանց հեռուստաընկերությունը նախ ուղիղ խոսքի ձևաչափերն ընտրեց: Եվ կարելի՞ է պնդել, որ մեզանում առավել հաջողված են գիտության լուսաբանման՝ առանց միջնորդության ձևաչափերը, ամենից ակնհայտը՝ «Բուն TV»-ի փորձը:

Ուղիղ փոխանցման հաջողությունը թերևս պայմանավորված է նաև գիտությունների և առհասարակ գիտության տարանջատման, «չակերտման» միջոցով փոխանցմամբ, որ գիտության սոցիալականացման տեսանկյունից պակաս համատեքստային և առավել ինքնաբավ է, քան միջնորդավորված՝ լրագրողական լուսաբանմամբ փոխանցումը: Վերջինս շարունակ առնվազն հասարակական օրակարգերի հետ կապեր տեսնելու, ստեղծելու և մեկնաբանելու խնդիրներ է հարուցում: Միջնորդավորված փոխանցումը թերևս նաև ավելի է ենթակա առևտրային ճնշումների, քանի որ մի կողմից՝ առավել հասարակական է, ուրեմն և ենթակա թեմաների աստիճանակարգերին և օրակարգերին, մյուս կողմից՝ զիջում է ուղղակի փոխանցմանը ոճային առումով: Վերջինս հեղինակայնության, առանձնահատկությունների և տարբերությունների շեշտվածության շնորհիվ ընդգծված է և ավելի հրապուրիչ դրամաշնորհային ֆինանսավորման համար:

Այսպիսով՝ ուղիղ փոխանցման հաջողությունը հանգեցնում է անուղղակի փոխանցման մասին հարցերի, որ հակիրճ կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. **անուղղակի, երրորդ դեմքով ներկայացումը խմբագրական միջամտություն է:** Այստեղ էլ ուրվագծվում է ընդհանրապես լրագրության և մասնավորապես գիտական լրագրության հարցը՝ որպես սոցիալ-հումանիտար հարց առհասարակ և որպես սոցիալ-հումանիտար միջնորդության հարց մասնավորապես: Հայաստանում նման միջնորդությունը կարծես չի հաջողում:

Ասվածը հիմնավորելու համար հարկ է նախ հստակեցնել՝ ինչ ենք փնտրում և ինչ ենք ակնկալում ստանալ՝ առաջադրելով «սոցիալ-հումանիտար միջնորդություն» հղացքը:

Կողմերի միջև ուղերձների փոխանակումը, ինչպես հայտնի է, մեդիայի հիմնական գործառույթներից է, որ բազմիցս և տարբեր տեսանկյուններից ուսումնասիրված է: Այսինքն՝ խնդրականը հենց սոցիալ-հումանիտար միջնորդություն ասվածն է, ոչ թե պարզապես միջնորդությունը: Այստեղ տեսանկյուններից մեկը միջնորդի՝ որպես երրորդ կողմի դերակատարության, լիազորությունների հարցն է: Գայթակություն է առաջանում ուղիղ առնչություն ստեղծելու միջազգային իրավունքում երրորդ՝ միջնորդ կողմի դերակատարության հետ, որ բնորոշվում է «պարզ համագործակցությունից» կամ «բարի ծառայություններից» տարբեր՝ բանակցությունների և վեճերի կարգավորման համար հիմք հանդիսացող որոշակի առաջարկների ներկայացմամբ: Այս բնորոշումը մեդիայի գործունեության վրա տարածելիս կարելի է պատկերացնել փոխազդուն (ինտերակտիվ) մեդիայի ակտիվ, ոչ չեզոք դիրք և սոցիալական լայն հանձնառություններ, որոնք թերևս կարելի էր քննարկել նաև որպես այլընտրանքային մեդիապրակտիկաներ<sup>2</sup>:

Իսկ կարելի՞ է արդյոք **գիտական լրագրության միջնորդական դերի մասին** հարցը զուգահեռել **ժողովրդավարական երկրներում մասնագիտական գիտելիքի և ոչ մասնագիտական մասնակցության** վերաբերյալ քաղաքական հարցին: Փաստերի լրագրությունը և կարծիքի լրագրությունը տարանջատող մինչթվանշային մեդիայի հետ համեմատելով թվանշային մեդիան՝ եվրոպական ժողովրդավարություններում փորձագիտական գիտելիքի դերը քննող հետազոտողները հարց են տալիս. «Առցանց լրատվամիջոցներն ունե՞ն կարողություն՝ հաշտեցնելու գիտելիքը և կարծիքը հանրային միջնորդության նորարարական եղանակների և հանրության ավելի մեծ մասնակցության միջոցով»<sup>3</sup>: Ընդ որում, հարցադրման հեղինակները դիտարկում են մեդիան որպես քաղաքական գիտելիքի միջնորդ և արտադրող: Գիտական լրագրության միջնորդական դերի մասին հարցը մեր ենթադրած զուգահեռության մեջ կարող է այսպես հնչել. կարո՞ղ են

2 Տե՛ս **Կարապետյան Մ.**, Այլընտրանքային հավակնությունները մեդիայում, «Ժուռնալիստիկա և հարողակցություն. տեսության և պատմության հարցեր», Եր., ԵՊՀ հրատ., 2020, N 3 (15), էջ 28-54:

3 **Michailidou A., Trenz H. J.**, The Media as Public Intermediaries of Knowledge in Europe: From Deliberation to Democratic legitimation, *in* **Góra M., Holst C., Warat M. (Eds.)**, Expertisation and Democracy in Europe, Routledge, 2017, p. 172.

արդյոք ոլորտային գիտելիքները հանրային ավելի մեծ և ուղղակի մասնակցություն ստանալ գիտական լրագրության միջոցով:

Միջնորդության սոցիալ-հումանիտար բնույթը պատկերացնելու առումով պիտանի են թվում նաև էլեկտրոնային առևտրում միջնորդության գործառույթների վերաբերյալ Ջոզեֆ Փ. Բեյլի (Joseph P. Bailey) և Յենիս Բեքոսի (Yannis Bakos) դիտարկումները: Էլեկտրոնային միջնորդության նոր չորս գործառույթները՝ ագրեգացիա (միավորում), մատակարարների և գնորդների համապատասխանեցում, վստահության ապահովում և միջկազմակերպական շուկայական տեղեկատվության ապահովում<sup>4</sup>, համադրելի են թվում լրագրողական միջնորդության հետ: Եվ այս համադրելիությունը մեր թեմայի շրջանակներում ուշարժան է նախ և առաջ տվյալ պարագայում ֆինանսականի և սոցիալ-հումանիտարի փոխհարաբերությունների տեսանկյունից: Այսօր կարելի է երևակայել, օրինակ, թե սոցիալ-հումանիտար ինչ աշխատանք և արդյունք կարելի է ակնկալել, ասենք, գիտության ոլորտներ-հասարակական շերտեր առնչություններ ստեղծող գիտական լրագրությունից: Մեր հասարակության մեջ ովքե՞ր և ի՞նչը կմիավորվեն, եթե լուսաբանվում է, օրինակ, գենետիկ հետազոտություններ կատարող լաբորատորիայի աշխատանքը: Այն է՝ կլինի՞ արդյոք լուսաբանման հասցեատեր, թիրախային լսարան: Կլինի՞ այս միջնորդության և դրա արդյունքի մեջ առևտրային-շուկայական բաղադրիչ: Հայաստանյան հասարակության մեջ ինչպե՞ս կդրսևորվի գիտելիքի՝ ժան-Ֆրանսուա Լիոտարի նկատած շուկայական արդարացման կարիքը հետարդիության պայմաններում: Ինչպե՞ս կբաշխվեն ու կհարաբերվեն միմյանց հետ շուկայականն ու արժեքայինը:

Հայաստանյան իրականության համար ուրվագծվում է թերևս շատ կարևոր մի հարց ևս. միջնորդությունը հնարավո՞ր է իբրև կայուն հաստատություն (ինստիտուտ)՝ առանց եզրային բևեռների՝ մատակարարների, փոխանցվող բովանդակության, այն է՝ գիտական արդյունքի, և լսարանի կայունության: Եվ եթե բևեռների հաջողված կղզյակները հարաբերականորեն ինքնուրույն են, որո՞նք են հումանիտար միջնորդության պայմանները:

---

4 Տե՛ս Bailey J. P., Bakos Y., An Exploratory Study of the Emerging Role of Electronic Intermediaries, "International Journal of Electronic Commerce", 1997, Vol. 1, 3, էջ 7-20:

Եթե չկան հաստատության գիտելիքը և նշված մյուս բևեռները, միջնորդությունը դառնում է կարծես ինքնաբավ-ինքնանպատակ: Բայց հասկանալ սա գուցե կնշանակի նաև ժամանակավոր դարձնել այս ինքնաբավության դրությունը: Մշակութային քննադատ Հրաչ Բայադյանը, խոսելով հետխորհրդային Հայաստանում մշակութային հեղափոխության անհնարիմության մասին, 2007 թ. գրված իր հոդվածներից մեկում մասնավորապես նկատում է. «Բազմաթիվ լուրջ և հրատապ հարցերի մասին խորհրդածելու և լուծումներ առաջարկելու հիմնական տեղը, պատշաճ գիտական կարողությունների և ասպարեզի բացակայության պայմաններում, հաճախ դառնում են հանրահավաքային հարթակներն ու լրագրերի խմբագրական սյունակները»<sup>5</sup>: Կարելի է փոխել Հ. Բայադյանի ասածի շեշտը՝ հոդավորելով իրավիճակի գնահատականը հակառակ կողմից, այն է՝ չունենք կամ գրեթե չունենք **հաստատության գիտություն**, բայց փորձում ենք տարածել գիտելիք գիտությունների վերաբերյալ: Բայադյանի ասածի մոդալությունն ենք փոխում: Կարո՞ղ ենք ասել՝ ինչ որ ունենք, այդուամենայնիվ, արժեքավոր կարող է դառնալ նրանով, որ...: Կարծում ենք՝ այս հարցն ավելի առարկայական և կարևոր է հետևյալ կերպ. **կարո՞ղ է արդյոք միջնորդությունն ունենալ սահմանադիր նշանակություն**, այն է՝ առնչություններ հաստատելու միջոցով սահմաններ դնել գիտության տարբեր ոլորտներին և դրանց հանրային նշանակությանը, այսինքն՝ նպաստել դրանց հաստատությանը<sup>6</sup>: Այս հարցին կանդիդատանք հետագա շարադրանքում:

### 3. Գիտության լեզուներ և փոխանցման լեզու

Այսպիսով՝ ձևակերպեցինք հարցեր Հայաստանում սոցիալ-հումանիտար միջնորդության վերաբերյալ՝ մասնավորեցնելով գիտական լրագրության ոլորտը: Այս տրամաբանությամբ հարկ է նախ առանձին և մանրամասն քննել **լրագրողական աշխատանքը՝ որպես լեզվական փոխանցման, պատմությունների փոխանցման աշխատանք**, որ հումանիտար աշխատանք է, եթե անգամ բնական գիտությունների փաստեր է փոխանցում:

5 Բայադյան Հ., Հեղափոխություն, <https://hetq.am/hy/article/6736> (մուտք՝ 30.01.2022):

6 Տե՛ս նաև Կարապետյան Մ., Հասարակական հաստատություններ և մեդիա. հիմնախնդիրներ, «Ժուրնալիստիկա և հաղորդակցություն. տեսության և պատմության հարցեր», Եր., ԵՊՀ հրատ., 2018, N 1 (13), էջ 16-40:

Նախ՝ բուն լեզվի՝ հայերենի հարցը: Վերջին շրջանում շատերն են նկատում, որ մասնավորապես տեղեկատվական տեխնոլոգիաներին վերաբերող բոլոր հանրային միջոցառումներում՝ ցուցահանդեսներ, աշխատանքի տոնավաճառներ, դասընթացներ, գերակշռում է անգլերենը՝ որպես պաստառների, տեղեկատվական գրությունների, եզրույթների լեզու: Թարգմանության անհրաժեշտությունը չեղարկելու, համաշխարհային շուկայի հետ առանց միջնորդների խոսելու վերաբերյալ հիմնավորումները միանգամից կորցնում են ուժը, երբ խոսքը, օրինակ, դասընթացի մասին է, որի բոլոր մասնակիցների համար հայերենը մայրենի լեզու է: Հայերենը բացահայտ կամ ոչ բացահայտ կերպով պիտանի չի համարվում գիտության և մասնավորապես տեխնոլոգիական ոլորտի մասին խոսելու համար: Անգլերեն անուններն ու ձևակերպումները (խոսքը նաև ոչ բարդ, թարգմանական դժվարություն չներկայացնող բառերին է վերաբերում) իռացիոնալ արևմտականության ու տեխնոլոգիական լավատեսության են տանում. այդ բառերի ծագման ու հայաստանյան իրականության «երկրաչափությունը» նույնական չէ, այնինչ տեխնոլոգիաների ծագման լեզուն կիրառելով՝ առնվազն պարզապես ու հավակնությունների մակարդակում փորձ է արվում մեջտեղից հանելու մշակութային համատեքստերի տարբերություններն ու յուրացման բարդությունները: Այսինքն՝ տեխնոլոգիաների մասին խոսելու այս մեկ միջնորդությունն անհրատեսության է տանում այդ փորձը՝ արդեն իսկ լեզվի հանգամանքով պայմանավորված: Այսպիսով՝ տեխնոլոգիաների մասին պատմելու, դրանք ներկայացնելու հումանիտար տեսանկյունն այստեղ ակնհայտ է որպես դրանց մասին խոսելու լեզու՝ բառի հիմնական իմաստով: Մեր հասարակության մասին ռացիոնալ խոսել կկարողանանք միայն այն ժամանակ, երբ կխնդրականացնենք մեր լեզուն՝ դրա տարբեր կարելիությունների, դժվարությունների, հնարավորությունների, միջամտությունների և մարտահրավերների տեսանկյունից:

Այսպիսով՝ փոխանցման լեզուն խնդրականացնելը կարևոր, բայց անտեսվող հարց է: Օրինակ՝ վերջերս կազմակերպված և նյութի, մասնակիցների ու դասավանդողների բավականին ընդգրկուն շրջանակ ունեցող մի դասընթաց նվիրված էր գիտական լրագրությանը: Կազմակերպիչների գրագրության, պաստառների լեզուն անգլերենն էր: Անգլերեն էր նաև ելույթների լեզվում բառերի մի մեծ քանակ: Գի-



տության լուսաբանումը՝ գիտական լրագրությունը, քննարկման հարց էր դարձել անգլերենի բավականին կոշտ ու շոշափելի, թեև հնարավոր է՝ նաև ձևական-«անվանական» միջամտությամբ, գուցե նաև ինտերցիայով, ուստի լուսաբանման լեզուն՝ հայերենը, անգիտությամբ ավելի էր օտարացվում՝ դրանով իսկ սոցիալ-հումանիտար խզվածք առաջացնելով հանրային ակտիվ շրջանակների ակնկալիքների, նպատակների, հանձնառությունների և առկա հանգամանքների ու խնդիրների միջև: Եթե փոխաբերության դիմենք, կարող ենք ասել, որ խնդիրների ու հանձնառությունների անհամարժեքության, խզվածքի կարևոր ապարներից մեկը հայերենն է:

Լեզվին առնչվող մյուս կարևոր հարցը գիտության լեզուների հարցն է, որովհետև գիտական լրագրության և առհասարակ գիտության մասին խոսելու հարցը նաև գիտության լեզուների հարց է: Եվ առհասարակ լեզվի հարցին է, որ գումարվում է մասնավոր հայերենի հարցը:

Այստեղ առանցքային է գիտության լեզուների «թարգմանության» խնդիրը: Այն ծագում է նաև փիլիսոփայական տարբեր հարցեր քննող տեսաբանների մոտ, օրինակ՝ որպես մտահայեցությունները փիլիսոփայության պատմության լեզվի փոխադրելու խնդիր: Այսպես՝ «Ֆիզիկոսների համար նույնպես սովորական լեզվով նկարագրությունը չափանիշ է տվյալ բնագավառում ձեռք բերված ըմբռնողության ծավալի»<sup>7</sup>, - նկատում է նշանավոր ֆիզիկոս Վ. Հայզենբերգը: Ըստ նրա՝ «Մինչև տասնիններորդ դարի վերջը ներմուծված բոլոր հասկացությունները կազմում էին մի այնպիսի փակ համակարգ, որը կարող էր գործածվել նաև փորձառության առավել լայն շրջանակում և ավելի վաղ հասկացությունների հետ մեկտեղ կազմում էր մի այնպիսի լեզու, որն իրենց աշխատանքներում հեշտությամբ կարող էին գործածել ոչ միայն գիտնականները, այլև տեխնոլոգները և ինժեներները»<sup>8</sup>: Խոսելով այդուհետև փոփոխվող իրականության մասին՝ ֆիզիկոսը վերլուծում է մասնավորապես քվանտային ֆիզիկային վերաբերող մի շարք օրինակներ՝ ցույց տալու սովորական լեզվով դրանք ներկայացնելու դժվարությունները, նաև անհնարիությունը: Այսպես՝ Վ. Հայզենբերգը գրում է. ««Փաստի» հասկացությանն է պատկանում այն, որ վեր-

7 Հայզենբերգ Վ., ֆիզիկա և փիլիսոփայություն, Եր., «Անկյունաքար», 2016, էջ 200:

8 Նույն տեղում, էջ 207:

ջինս կարելի է նկարագրել սովորական լեզվի շրջանակներում: Սակայն լեզվի խնդիրներն այստեղ շատ լուրջ բնույթի են: Մենք ցանկանում ենք ինչ-որ կերպ խոսել ատոմի կառուցվածքի և ոչ թե լոկ փաստերի մասին (օրինակ՝ սրանց են պատկանում ֆոտոէլեկտրական թիթեղի սև բծերը կամ պղպջակային խցիկում՝ ջրի կաթիլները): Սակայն սովորական լեզվի շրջանակներում մենք չենք կարող խոսել հենց ատոմի մասին»<sup>9</sup>:

Հայգենքերգի այս դատողությունները մեր հողվածի դիտանկյունից արժեքավոր են, քանի որ ցույց են տալիս գիտության առանձին լեզուների և սովորական լեզվում դրանց գործածման դժվարությունները: Իսկ ի՞նչ պետք է անի գիտական լրագրությունը, եթե այսչափ խնդրական է արդեն իսկ գիտության լեզուների և սովորական լեզվի հարաբերելիությունը: Բայց գուցե գիտական լրագրության խնդիրն է այլ:

#### 4. Գիտական լրագրություն = ... : Մեկնաբանության անվանած հարցերը

Գիտական լրագրության մեջ սուր է դրսևորվում լրագրողական դիլեմանստության խնդիրը: Հաճախ դիլեմանստությունն իբրև խոչընդոտ չի էլ գիտակցվում լրագրողի կողմից, իսկ մասնագիտական հանրությունների շրջանակներում դժգոհություն ու անվստահություն է առաջանում լրագրողների նկատմամբ: Երբ փորձ է արվում քողարկելու դիլեմանստությունը, այն սպրդում է առնվազն որպես նուրբ տրամաբանական կապերի խախտումներ, իսկ այն հաղթահարելու ուղիների շուրջ մտահոգությունը կարող է տանել **կա՛մ դեպի մասնագիտացած լրագրություն, կա՛մ հույժ մասնագիտական ասելիքի փոխակերպման** մասին հարցի:

Հավանաբար հայաստանյան մեդիադաշտի կարևոր պակասություններից մեկը կարելի է համարել մասնագիտացած լրագրության պակասը. լրագրություններ, որոնք կանգ են առնում մասնավորապես լուսաբանվող ոլորտների լեզուների առաջ՝ փորձելով ձշտել իրենց անելիքները: Այս տրամաբանությամբ գիտական լրագրության մասին

---

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 213-214:

խոսելիս հարկ է ավելի մեծ ուշադրության արժանացնել տարբեր գիտական դիսկուրսները և հարցն առավել լրջացնելու դեպքում նաև դրանց գոյության հարցն ինքնին, այսինքն՝ փնտրել գիտական դիսկուրսներ հայաստանյան գիտության բնագավառներում և դրանց լինելու կամ չլինելու տարբեր խնդիրների առջև կանգնել: Այդուհետ կարող է առաջանալ գիտության ոլորտների լեզուների և առօրյայի լեզվի սահմանների տարանջատման հարցը «լրագրելիս». «գուտ» գիտություն: Այստեղ է, որ վերևում «կամ»-ով ձևակերպված բևեռները՝ մասնագիտացած լրագրությունը և մասնագիտական ասելիքի փոխակերպման աշխատանքը, զուգադիպում են և սկսում մտածվել միասին. եթե հավատանք Վ. Հայզենբերգին, որ երբեմն գրեթե անհնար է բնական լեզվով արտահայտել գիտությունը նույնիսկ գիտության փիլիսոփայության համար, ապա մասնագիտացած լրագրությունը լավագույն դեպքում չի՞ նշանակում **ոլորտային-մասնագիտական նյութի փոխակերպման աշխատանք**:

Այստեղ էլ մետատեքստի հարցն է երևան գալիս. լրագրողական տեքստը՝ իբրև մետագիտելիք, սոցիալ-հումանիտար միջնորդությունը՝ իբրև մետագործունեություն: Այստեղ արժեքավոր են հենց լրագրողական պատմությունների համար կատարվող ընտրությունները և՛ հիմնական նյութի, և՛ նյութի մասերի մակարդակներում, դրանց առնչությունների (վերա)խմբավորման, (վերա)ուղղորդման, (վերա)հասցեագրման աշխատանքը թեկուզ վերացականորեն պատկերացվող ամբողջի թեկուզ հատվածական դիտարկման և (վերա)նշանակման հետևանքով: Եվ ուրեմն կոնկրետ ի՞նչ փոխարինման աշխատանք կարող է ենթադրել գիտական լրագրությունը՝ որպես սոցիալ-հումանիտար միջնորդություն:

**1. Գիտական լրագրություն = տեղեկանք գիտական հաջողությունների մասին:**

**2. Գիտական լրագրություն = լրագրություն գիտության պայմանների մասին = հարցեր հանգամանքների, պայմանների և օրինաչափությունների վերաբերյալ:**

Երևույթների պատճառական կապերի որոնումը լրագրության համար կարող է նշանակել, օրինակ, տեղափոխել տվյալ թեմայի քննարկման հիմնական շեշտը, ասենք՝ **փոխարինել մասնավորը համատեքստով** (օրինակ՝ գիտության բնագավառի մասնավոր խնդիրը

փոխարինվում է այդ խնդրի ոլորտային-մասնագիտական, սոցիալական, քաղաքական և այլ առնչությունների մասին հարցով, ասենք՝ որևէ բժշկական սարքավորման արտադրությունը դիտարկվում է առհասարակ բժշկական սարքավորումներով հիվանդանոցների ապահովվածության, այդ ապահովվածությունը՝ բուժօգնության որակի, բուժօգնության որակը՝ առողջապահության որակի համար պատասխանատուների ծրագրերի համատեքստում և այլն), **ընդհանուրը՝ մասնավորներով** (օրինակ՝ առողջապահության ոլորտում պետության քաղաքականության լայն թեման փոխարինել դրա բաղադրիչները (բժշկական կրթություն, բժիշկների աշխատավարձեր, հիվանդանոցների տեխնիկական ապահովվածություն, առողջապահության բնագավառի հետազոտությունների ու նորամուծությունների ֆինանսավորում, կոնկրետ գիտափորձերի մասին պատմություններ) ներկայացնող հոդվածաշարով), **գիտական որոշակի արդյունքը՝ դրա սոցիալական պայմանների մասին հարցերով**:

Կարծում ենք՝ ներկայացված դատողություններն այս կետում մի կարևոր մտքի են հանգեցնում, որ ցանկանում ենք ընդգծել. գիտության սոցիալական ներկայացումը հաճախ ավելի հավաստի է և օգտակար որպես **օրակարգերի խախտման, փոխարինման աշխատանք, քան վերապատման-նկարագրման**:

Այստեղ, իհարկե, մի շարք խնդիրներ կան: Փոխարինման հնարավորությունը շարունակ բախվում է, մասնավորապես, ոչ որակյալ ընդհանրացումներին: Օրինակ՝ գիտական լրագրության վերաբերյալ դասախոսության ընթացքում ձևակերպված նույրբ և որոշակի ուղղություններն ամենախելացի ուսանողներից մեկն ընդհանրացնում է մտավորապես այսպես. «Շատ բան մենք արդեն գիտեինք, գիտեինք, որ պետք է հարցեր տալ, որ պետք է անել...»: Կոնկրետ անելիքներն ու հարցերը վերածվում են առհասարակ ինչ-որ բան անելու և արհեստավարժ կերպով տրված հարցերի՝ ընդհանրացման մեջ զրկվելով կոնկրետ քայլ լինելու հնարավորությունից: Ուստի հարկ է կրկին ընդգծել հենց **փոխարինման** պրակտիկայի բերած հնարավորություններն ու նշանակությունը լրագրողական աշխատանքի համար և դրա գիտակցականացման դերը: Գիտության լուսաբանման հանձնառությունն այս դեպքում ենթադրում է գիտակցել բուն գիտական բովանդակության և լուսաբանող բովանդակության տարբերությունները:

լրագրողական նկարագրությունը միշտ պարզեցնում, հաճախ նաև պարզունակացնում է գիտությունը, իսկ փոխարինման աշխատանքը փորձում է ցույց տալ գիտության հասարակական կողմերը՝ հանգամանքներ, մասնակիցներ, իրագործման պարագաների հարուցած դժվարություններ և այլն: Օրինակ՝ մոլեկուլային կենսաբանության փորձը ներկայացնել-բացատրելու փոխարեն պատմվում է դրա ֆինանսավորման ուղղությունների, դրա նշանակության մասին, տեղեկություն է տրվում լաբորատորիայի աշխատակիցների մասին և այլն: Փոխարինման աշխատանքը, անշուշտ, ենթադրում է նաև որոշակի կողմնակիություն բուն գիտության նկատմամբ, բայց այդ կողմնակիությունը թերևս ավելի մեծ չէ, քան գիտության լրագրողական նկարագրության կողմնակիությունը: Փոխարենն այն առավել ճշգրիտ է ոլորտների տրամաբանության սահմանները չխախտելու իմաստով<sup>10</sup> և ավելի գործնական՝ հասարակական իմաստով:

**Գիտությունների հնարավորության պայմանների** խնդրականացման տեսանկյունից սոցիալ-հումանիտար նշանակություն ունի գիտության լուսաբանման նշված և այլ համատեքստերի, խթանների-դրդիչների, դրանց բացակայության դեպքում՝ այդ բացակայության մասին մտահոգությունը: Ի՞նչ առնչություններ ստեղծել հասարակության ու գիտությունների միջև, ի՞նչ դիրքերից հարցեր տալ գիտության մասին: Բերված օրինակները կիրառական գիտության ոլորտից էին, ուստիև ոչ այնքան բարդ՝ սոցիալականացման, համատեքստայնացման տեսանկյունից: Բայց միշտ չէ, որ դա այդքան հեշտ է: Լուսաբանման դիրքի ընտրությունը սոցիալ-հումանիտար հարց է, և դրա բարդությունն է նաև, որ գիտության անուղղակի լուսաբանման համար անհրաժեշտ վերլուծության, հասկացման, սոցիալականացման փոխարեն մղում է նախապատվություն տալու ուղղակի փոխանցմանը, ինչի մասին խոսեցինք «Բուն TV»-ի օրինակով: Երբ գիտության կարևորությունն օդում կախված է ու շատ ակնհայտ, բայց չկան ընդհանրացման, համատեքստայնացման, սոցիալական պայմաններ ու առնչություններ տեսնելու և նախապատրաստելու հիմքեր ու կարողություններ, ուղիղ փոխանցումը<sup>11</sup> փրկողակ է դառնում:

10 Տե՛ս նաև **Կարապետյան Ս.**, Հաղորդակցության ոճեր և մեդիահաղորդակցություն, Եր., Հեղինակային հրատ., 2020, էջ 44-47:

11 Տե՛ս նաև նույն տեղում, էջ 52-53:

Հումանիտար դիրքի բացակայության օրինակ է տեխնոլոգիական երկիր դառնալու մեր՝ տարիներով ձգվող հավակնոտ խանդավառության պատմությունը: Այս խնդրի առնչությամբ սոցիալ-հումանիտար դիրքի ու դիտակետերի եզակի օրինակ են Հ. Բայադյանի հետևողական հոդվածաշարերը: Դրանք գուցե միակ համակողմանի և սթափ արձագանքն են Հայաստանի տեխնոլոգիական լավատեսությանը, տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման, Հ. Բայադյանի խոսքերով, «առանց դիրքորոշման ծրագրերին»<sup>12</sup>:

Գիտության փիլիսոփա Թ. Կունի դիտարկմամբ՝ «Գիտական յուրաքանչյուր հեղափոխություն փոխում է այն գիտական համայնքի պատմական հեռանկարը, որն ապրում է այդ փոփոխությունը, ապա հեռանկարի փոփոխությունն ազդելու է հետհեղափոխական շրջանի դասագրքերի և հետազոտական բնույթի հրապարակումների կառուցվածքի վրա: Այդպիսի հեռանկարներից մեկը տողատակի հղումներում անցումն է տեխնիկական գրականությունից հետազոտական հրապարակումներին. սա պետք է դիտվի որպես հեղափոխության առկայության հնարավոր նշաններից մեկը»<sup>13</sup>: Եթե տեղայնացնենք միտքը Հայաստանում գիտությունների բեկումնային զարգացման երազանքի ու հավակնությունների առնչությամբ, ապա կունենանք բուն գիտական հաստատությունների և գիտությունների ներսում լուրջ փոփոխությունների անհրաժեշտության ևս մեկ հիմնավորում: Բայց սխալված չենք լինի, եթե այստեղից արտածենք **առհասարակ գիտությունների մասին խոսելու ցանկացած հավակնության** համանման վերանայման անհրաժեշտությունը:

**3. Ընդհանրացման ու պատճառականացման աշխատանքին զուգահեռ՝ գիտական լրագրությունը կարող է նաև այլ աշխատանք անել՝ մասնավորեցնելով, առանձնահատուկ դարձնելով գիտական պրակտիկաները:** Տարբեր դարաշրջանների գիտության ուսումնասիրման հարցերը քննող Միշել Ֆուկոյի պես կարելի էր այստեղ ձգտել «երևան հանելու իրադարձությունների եզակիությունը՝ հրաժարվելով ամենայն միօրինակ նպատակահարմարությունից»<sup>14</sup>: Ֆուկոյի միտքը, անշուշտ, գիտությանը նետված գիտական հայացքին

12 **Բայադյան Հ.**, Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները Հայաստանում, <https://hetq.am/hy/article /2142> (մուտք՝ 20.08.2021):

13 **Կուն Թ.**, Գիտական հեղափոխությունների կառուցվածքը, Եր., «Զանգակ-97», 2004, էջ 11:

14 **Foucault M.**, Dits et écrits, 1954-1988, tome II: 1970-1975 /Ed. D. Defert et F. Ewald, Paris: Gallimard, 1994, p. 136. **Вен П.**, Фуко. Его мысль и личность /Пер. с фр. А. В. Шестакова, СПб, «Владимир Даль», 2013, с. 16.

է վերաբերում: Եթե իբրև գիտական հայացք՝ նման մոտեցումը բարդ է և՛ տեսական պատրաստվածության, և՛ մեթոդաբանության տեսանկյունից, ապա որպես լրագրողական հայացքի հնարավորություն փոխառվելիս պակաս բարդ է, բայց թերևս շատ արդյունավետ: Իբրև հումանիտար միջնորդություն՝ այն կնշանակեր թեկուզ միայն մակերեսային, արտաքին առանձնահատկությունների վերհանում, յուրաքանչյուր պրակտիկայի համար տարբեր պատմությունների ընտրություն, դրանով մասնավորի, տարբերի հանրայնացում՝ առավելություն տալով դրան կադապարային ընդհանրությունների նկատմամբ:

**4. Գիտական լրագրությունը գիտական այս կամ այն երևույթի ներկայացմանը զուգահեռ կարող է ներկայացնել նաև դրա ստեղծման պատմությունը:** Հետևաբար ստեղծման պայմանների ու հանգամանքների մասին պատմությանը լրագրությունը հասարակական պրակտիկայի է վերածում գիտական արդյունքի ստեղծումը: Նույն դերն ունեն նաև գիտնականների, գիտության հետ առնչվող մարդկանց հետ կողմնակի, ոչ զուտ գիտական թեմաներով զրույցներից մեջբերումները: Եթե գիտական տեքստում հղումները ծառայում են գիտաթեմայի հնարավորինս ամբողջական, համակողմանի մշակմանը, ապա լրագրողի վարած հարցազրույցների պատառիկները գիտության մասին պատմող լրագրողական տեքստում թեմային հասարակական շերտ են տալիս:

Այսպիսով՝ հայտնագործություն չէ այն, որ գիտական լրագրությունը որքանով **հանրամատչելի շարադրման** հարց է, այդքանով էլ **թարգմանության** հարց է: Գիտական հաստատություններն իրենց պարբերականներով, ըստ էության, փորձում են իրենք իրենց թարգմանել: Եվ եթե մասնագետների համար նախատեսված հրատարակությունները կարող են գիտական արդյունքների մասին տեղեկատվությամբ հաշվետվության արժեք ունենալ, ապա հասարակական-քաղաքական պարբերականներում զետեղվելիս թեկուզ չձևակերպվող հասարակականություն են ստանում: Ուրեմն հաջորդ հարցը հենց այդ չձևակերպվածի հողավորմանը պիտի վերաբերի: Այդ հասարակականությունն արժեքայի՞ն բաղադրիչի բերումով է, այն է՝ գիտությանը վերագրվող անվանական արժեքավորության պարզ ներառումն է հասարակական թեմաների, դրանով առհասարակ հասարակականի ոլորտ: Ունի՞ արդյոք շուկայական արդարացման կարիք: Ակտի՞վ է

գործառույթային կողմը, այն է՝ որոշակի՞ են կրթելու, խրախուսելու և հնարավոր այլ նպատակները: Պատասխանել այս հարցերին կնշանակի հասկանալ, թե ինչով են փոխարինվում բուն գիտական տեքստերն ու գիտական արդյունքները դրանց մեդիաներկայացման հետևանքով: Սա էլ իր հերթին կտանի գիտության հանրային նշանակության վերլուծության, գիտության զարգացման հասարակական պայմանների քննության, գիտությունից հանրային ակնկալիքների գնահատման և ռացիոնալացման:

## 5. Գիտական լրագրություն՝ պատմություններ գիտությունների մասին

2021 թ. ISTC հիմնադրամի, «Գիտուժ» նախաձեռնության և ԵՊՀ-ի կազմակերպած գիտական լրագրության դասընթացում մեզ հետաքրքրեց ֆիզիկայի և ֆիզիկոսների ակտիվ դերը: Զբացառելով այլ, մասնավորապես կազմակերպական հանգամանքները՝ դա բացատրելի է թվում երկու իրողությամբ՝ նախ՝ խորհրդային շրջանից ֆիզիկայի ուժեղ համայնքի ավանդույթով, ապա՝ ֆիզիկայում բնագիտամաթեմատիկական և «հումանիտար» մասերի սերտությամբ: Այս միտքը մղեց ավելի երկար պրպտելու բնագիտականի և հումանիտարի առնչություններն այս տեսանկյունից: Համացանցում հանդիպում են բազմաթիվ համանման դիտարկումներ: Սույն հոդվածի համար արժեքավոր է բազմիցս շրջանառվող այն կարծիքը, որ ուսումնական պլաններում հումանիտար առարկաների կրճատումը կարելի է փոխհատուցել բնական և տեխնիկական գիտությունների և մասնավորապես ֆիզիկայի հումանիտար ներուժի բացահայտմամբ: Բնական գիտությունների հումանիտար կողմերը բազմիցս ուսումնասիրվել են մասնավորապես ուսուցման նկատառումներով: Մի կողմ թողնելով հումանիտար գիտությունների կշռի անկման անքննադատ ընդունման հանգամանքը՝ տեղին ենք համարում վեր առնել հիմնական միտումը և զարգացնել այն այլ համատեքստում. բնական գիտությունների հումանիտար ներուժը կարելի է ընդգծել հումանիտար միջնորդությամբ՝ պատմելով դրանց մասին պատմություններ մասնավորապես գիտական լրագրության շրջանակներում: Գայթակղիչ է թվում նաև այն հնարավորությունը, որ սա բնական և հումանիտար ոլորտների գոր-



ծակցություն–փոխօգնություն կլինի առնվազն դրանց հասարակական բաղադրիչների մակարդակում:

Ավելի մանրամասն դիտարկենք պատմությունների հնարավոր դերը գիտության հանրայնացման տեսանկյունից:

Ըստ մի շարք տեսաբանների՝ պատմությունները ծառայում են որպես միջոց՝ փոխանցելու գիտելիքը սոցիալական համատեքստում: Արհեստական բանականության տեսաբան, ճանաչողական հոգեբան, կրթական բարենորոգիչ Ռոջեր Շենքի և հոգեբան ու քաղաքագետ Ռոբերտ Աբելսոնի պնդմամբ՝ գիտելիքը հիմնված է պատմությունների վրա, և գիտելիքի սոցիալական գործառույթների տեսանկյունից մարդկանց իմացածը կազմված է գրեթե բացառապես պատմություններից ու ճանաչողական մեխանիզմներից, որոնք անհրաժեշտ են պատմություններ հասկանալու, մտապահելու և պատմելու համար: Տեսաբանները, անշուշտ, նկատի են ունենում այն հակափաստարկը, որ կան շատ բաներ, որոնք քիչ առնչություններ ունեն պատմությունների հետ: Այդպիսիք են փաստերը, բառապաշարները, կանոնների համակարգերը, քերականությունը: Այս բացառությունների հռետորական ուժը, սակայն, ըստ տեսաբանների, կտրուկ նվազում է, երբ նկատի ենք ունենում մի քանի հանգամանքներ: Առաջին՝ շատ դեպքերում այդ ոլորտների առարկաները ծառայում են պատմությունները ցուցակագրելուն (այս պնդումը ձիշտ է հատկապես համոզմունքների դեպքում, բայց կիրառելի է նաև փաստերի, անգամ թվերի դեպքում): Երկրորդ՝ մարդիկ սովորաբար չեն գրուցում այդ ոլորտների վերաբերյալ: Այսպես՝ պետությունների մայրաքաղաքներն անգիր ենք սովորում դպրոցում և այլևս չենք հիշատակում, քանի դեռ չենք այցելել դրանցից մեկը (երբ այնտեղ կարող է պատմություն լինել): Երրորդ՝ այդ ոլորտների վերաբերյալ գրույցները մեծ մասամբ սահմանափակվում են մասնագիտական շրջանակներով: Ավելին՝ մասնագիտական գիտելիքի աճին զուգահեռ ի հայտ է գալիս բովանդակության «պատմականացման» միտումը. մաթեմատիկոսները պատմություններ են պատմում թեորեմների ապացուցման մասին, շախմատիստները՝ լեգենդար խաղերի և այլն<sup>15</sup>:

Գիտական լրագրության գործառույթների ու նպատակների մասին մտքերը կարող են նաև հանգեցնել հետարդիական ոգով մերժելու

15 Տե՛ս Schank R. C., Abelson R. P., Knowledge and Memory: The Real Story, [http://cogprints.org/636/1/KnowledgeMemory\\_SchankAbelson\\_d.html?fbclid=IwAR2W18op6tmChFj3ejFLXLKE3dTAVOdRPww1L2CAObGfqnxjLjUuMWwqgFw](http://cogprints.org/636/1/KnowledgeMemory_SchankAbelson_d.html?fbclid=IwAR2W18op6tmChFj3ejFLXLKE3dTAVOdRPww1L2CAObGfqnxjLjUuMWwqgFw) (մուտք՝ 12.10.2021):

անընդհատականության, ամբողջականության մասին պատկերացումները, որոնք հայաստանյան հասարակության ընկալումներում ավելի քան մշուշոտ ընդհանրացումներ են՝ ներկայացված իբրև «գիտություն»: Հետարդիության նշանավոր փիլիսոփա Մ. Ֆուկոյի գիտականփիլիսոփայական ձեռնարկումը՝ համեմատական քննությամբ բաժանելու դիսկուրսները դրանց բազմազանությունը նվազեցնելու, հանրագումարի բերելու և միասնականություն պատկերելու փոխարեն, միանգամայն հասանելի հանձնառություն կարող է լինել լրագրողական պրակտիկայում: **Մենթալիտետի փոխարեն մտքի ձևեր** փնտրելու Ֆուկոյի սևեռումը լրագրողական պիտանի դիրք է թվում:

Լրագրության միջոցով գիտության սոցիալականացման տեսանկյունից մեկնարկային նշանակություն ունեն նաև **գիտության և գիտելիքի հարաբերությունների** մասին հարցադրումները: Այդպիսիք կարելի է գտնել մասնավորապես հետարդիության շրջանի տեսաբանների աշխատանքներում:

Միշել Ֆուկոյի մեկնաբանմամբ՝ գիտելիքը մի բան է, որի մասին կարելի է խոսել դիսկուրսիվ պրակտիկայում: Վերջինս այդպիսով հատկորոշվում է իբրև ոլորտ՝ կազմված տարբեր օբյեկտներից, որոնք կատանան կամ չեն ստանա գիտական կարգավիճակ, իբրև տարածություն, որում սուբյեկտը կարող է դիրքավորվել և խոսել օբյեկտների մասին, որոնց հետ ինքը գործ ունի իր դիսկուրսում: Ըստ Ֆուկոյի՝ գիտությունը տեղայնացվում է գիտելիքի դաշտում և փոփոխվում, ուստի այն կարող է և պետք է դիտարկվի իբրև պրակտիկա՝ ի թիվս այլ պրակտիկաների<sup>16</sup>:

Հետկառուցաբան փիլիսոփա, սոցիոլոգ, գրականության տեսաբան Ժան-Ֆրանսուա Լիոտարը ևս տարբերակում է գիտելիքը և գիտությունը: Ըստ նրա՝ գիտելիքը հասկացվում է ոչ միայն որպես նշողական (դենոտատիվ) ասույթների ամբողջություն, ինչպես գիտության դեպքում է, այլև որպես պատկերացում տարբեր հմտությունների մասին՝ գործել, ապրել, լսել և այլն: Եվ հետևաբար հմտությունը դուրս է գալիս ձմարտության՝ որպես միակ չափանիշի բնորոշման և կիրառման շրջանակներից: Հմտությունը գնահատվում է նաև գործնական չափանիշներով (տեխնիկական որակավորում), ըստ արդարության

---

16 Տե՛ս **Абушенко В. Л.**, Мишель Фуко и его книга, Мишель Фуко: Археология знания, <https://gtmarket.ru/library/basis/6850/6856> (մուտք՝ 30.01.2022):

և/կամ բարիքի չափանիշի (բարոյական իմաստություն), ըստ հնչման և երանգավորման գեղեցկության (տեսալսողական զգայունություն) և այլն<sup>17</sup>:

Լիոտարը հղում է անում Մարքսին, որը, ըստ հետազոտողի, համաձայն է, որ գիտելիքն ուժ է դառնում ոչ թե գիտելիքի իր ձևով, այլ որպես սոցիալական գործունեության (praxis) անմիջական օրգան<sup>18</sup>: Հետազոտողը քննարկում է լեզվական հնարքները որպես լեզվական խաղեր<sup>19</sup>, որոնք բնորոշ են սոցիալական կապին հետարդիության ժամանակաշրջանում: Տեղեկատվական հասարակության զարգացման ընթացքում, ըստ փիլիսոփայի, այն գաղափարը, որ գիտելիքը պատկանում է հասարակության «ուղեղին» կամ «ոգուն», «աստիճանաբար տեղի է տալիս հակառակ սկզբունքի ուժեղացման հետևանքով, ըստ որի՝ հասարակությունը գոյություն ունի և զարգանում է միայն այն ժամանակ, երբ նրա մեջ շրջանառվող ուղերձները հազեցած են տեղեկությամբ և հեշտությամբ են ապակողավորվում»<sup>20</sup>: Տեսաբանի պնդմամբ՝ հաղորդակցության թափանցիկության այս գաղափարախոսությունը զարգանում է գիտելիքի առևտրայնացմանը զուգահեռ: Գիտական լրագրությունն այս կողմից դիտելիս երևում է առևտրային հասարակության միջավայրում՝ որպես դրա գործորդներից մեկը:

Որպես հավասարների միջև քննարկումների և հավասարների հանրույթի հավանության արդյունք՝ գիտական գիտելիքը, ըստ Լիոտարի, մեկուսանում է այլ լեզվական խաղերից, որոնց համադրությունը ձևավորում է սոցիալական կապ: Այդ գիտելիքը «այլևս անմիջական և համընդունելի բաղադրիչ չէ, ինչպես պատումային գիտելիքը, այլ անուղղակի բաղադրիչ, քանի որ դառնում է մասնագիտություն և կազմավորում հաստատություններ, և քանի որ ժամանակակից հասարակության մեջ լեզվական խաղերն իրացվում են հաստատությունների ձևով, որոնք գործարկվում են որակավորված գործընկերների՝ մասնագետների կողմից»<sup>21</sup>: Հետազոտողի մեկնաբանմամբ՝ այդպիսով

17 Տե՛ս Лиотар Ж.-Ф., Состояние постмодерна, М., Институт экспериментальной социологии, Санкт-Петербург, «АЛІЕТЕЙЯ», 1998, էջ 52:

18 Տե՛ս նույն տեղում, էջ 19:

19 Մեծ պատումների ավարտի և օրինավորման կոշտ դիսկուրսներից հրաժարման վերաբերյալ տեսության համատեքստում կիրառվող եզրույթ: Ըստ Լիոտարի գիտելիքի կիրառման հիմնական ձևը պատումն է, և հետարդիության պայմաններում մեծ պատումներին փոխարինում են փոքր պատումները՝ լեզվական խաղերը:

20 Նույն տեղում, էջ 21:

21 Նույն տեղում, էջ 66:

գիտելիքի և հասարակության միջև կապն արտաքնացվում (էքստերիորացվում) է, և ի հայտ է գալիս նոր խնդիր՝ գիտական ինստիտուտի և հասարակության միջև կապի խնդիրը: «Կարո՞ղ է արդյոք այդ խնդիրը լուծվել միայն ուսուցման միջոցներով, օրինակ՝ համաձայն այն ենթադրության, որ յուրաքանչյուր սոցիալական ատոմ կարող է ձեռք բերել գիտական հմտություն»<sup>22</sup>, - հարց է տալիս Լիոտարը: Այս հարցի պատասխանը կարելի է գտնել Լիոտարի հետագա դատողություններում: Փիլիսոփան անդրադառնում է ոչ պատումային գիտելիքի շրջանակներում պատումայինին այս կամ այն կերպ դիմելու հարցին: Օրինակ է բերվում որևէ գյուտ արած գիտնականը, որին հրավիրում են հեռուստատեսություն, կամ որից հարցազրույց են վերցնում թերթերը: Ըստ Լիոտարի՝ նրանք էպիկական պատմությունն են անում գիտելիքի, որն էպիկական չէ: Այդպիսով նրանք հետևում են պատումային խաղի կանոններին, որոնք դեռ ուժեղ են ոչ միայն ԶԼՄ-ներում, այլև գիտնականների հոգում: Այս փաստը հետագոտողը վերագրում է գիտական և «ժողովրդական» գիտելիքների հարաբերություններին: Այս պնդման լիոտարյան բացատրությունը քաղաքական է, այն է՝ պետությունը կարող է շատ միջոցներ ծախսել, որպեսզի գիտությունը կարողանա ներկայանալ որպես էպիկական: Այդպիսով պետությունը դառնում է վստահելի, հանրային հավանության է արժանանում: Լիոտարը չի բացառում, որ դիմումը պատումին անխուսափելի է առնվազն այնքանով, որ իր ասույթների ճշմարտացիությանը ձգտող գիտությունը հնարավորություն չունի օրինավորելու այդ ճշմարտությունն իր սեփական միջոցներով<sup>23</sup>:

Այսպիսով՝ հետագոտողը պատումին դիմելու գիտության միտումը բացատրում է հետարդիության «լեզվական խաղերի»՝ նշանակությունների արտադրության բազմազան համակարգերի պայմաններում գիտության ինքնաօրինավորման մղումով:

## Ամփոփում

Ի՞նչ արդյունք է տալիս գիտական լրագրության՝ իբրև սոցիալ-հումանիտար միջնորդության քննությունը: Հղանալով այս գաղափարը որպես մեկ մասնավոր-մասնագիտական բնագավառի՝ **մեդիափոր-**

22 Սույն տեղում, էջ 67:

23 Տե՛ս նույն տեղում, էջ 71-72:

**ձառության հակակշիռ բնական գիտություններին տրվող անքննադատ նախապատվությանը՝** ուսումնասիրության ընթացքում «տեղաշարժեցինք» քննարկվող հարաբերությունը: Քննարկված մոտեցումը սոցիալ-հումանիտար միջնորդության վերաբերյալ ոչ միայն արձանագրում է, որ հայաստանյան հասարակության մեջ բնական գիտություններից ունեցած ակնկալիքները հաճախ հիմնավոր չեն, քանի որ իրական կարիքները սոցիալ-հումանիտար բնույթի են, այլև թույլ է տալիս **բնականի ու սոցիալ-հումանիտարի հարաբերություններում կապի և միջամտության գործնական ելակետեր** փնտրել: Առաջարկվող մոտեցումները կարող են տանել որակապես նոր հարցադրումների, օրինակ՝ գիտակցել, որ գիտական լրագրությունը սոցիալ-հումանիտար միջնորդությամբ հանրայնացնում է գիտական պրակտիկաները, մղում այն հարցին, թե լուսաբանման յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ինչ առնչություն ենք ցանկանում ստեղծել գիտական գիտելիքի և հասարակության միջև, ինչ պատմություններ են գիտական գիտելիքը վերածում ոչ գիտական գիտելիքի, ովքեր և ինչպես են պատմում գիտության մասին: Այս հարցի առնչությամբ **գիտելիքի ուղիղ և անուղղակի փոխանցման վերլուծությունը** հողվածի կարևոր հանգրվաններից ենք համարում: Հարցի քննարկումը թերևս կարելի է ընդհանրացնել հետևյալ կերպ՝ գիտելիքի **միջնորդավորված փոխանցումը որպես գիտության և գիտելիքի հասարակական համատեքստեր նկատելու և ստեղծելու աշխատանք**, աշխատանք, որ բնագավառների միջև կապերի ու առնչությունների հողավորման նշանակություն կարող է ունենալ մի շարք ոլորտներում, տվյալ դեպքում՝ մեդիայում ձեռնարկվելիս:

Բուն լրագրողական աշխատանքին վերաբերող գործնական ուղղությունները, որ նշված են հողվածում, ներկայացվող տեսական հարցադրումների օգնությամբ կարող են դառնալ **գիտակցված** լրագրողական հանձնառությունների մշակման հիմք: **Այսպես՝ գիտության ոլորտների հաստատությանը նպաստելը և գիտական գիտելիքի հանրայնացմանը նպաստելը հողվածում ներկայացված մեկնաբանությունների խորապատկերին երկու կարևոր, բայց հակադիր ուղղություններ կարող են թվալ, սակայն իբրև լրագրողական աշխատանք՝ դրանք միանգամայն համադրելի կարող են լինել հենց լրագրության գործառույթների բերումով:**

**Մարիամ Մ. Կարապետյան** – ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի դոցենտ, մեդիայի հետազոտող: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են մեդիայի և մշակութային ուսումնասիրությունների, մշակութային լրագրության, հաղորդակցության տեսությունների, մեդիա-հասարակություն փոխառնչությունների հիմնախնդիրները:

Էլ. հասցե՝ mariamkarapetyan@ysu.am

Summary

## **THE TELLING ABOUT SCIENCE**

As a social and humanitarian mediation

Mariam M. Karapetyan

*Candidate of Sciences in Philology*

**Keywords** – Scientific journalism, natural sciences, socio-humanitarian mediation, socio-humanitarian practice, scientific knowledge, non-scientific knowledge, socialization of science, narrative knowledge, non-narrative knowledge, legitimation of science.

In discussions about the role of science in Armenia and the ways of its development, the arrow of criticism and expectations is primarily directed at the state, expecting a significant increase in funding for the field of science. However, in addition to the main addressee and its functions, we can see other possible participants in the development of the field, often with less obvious and less specific functions. The given article discusses scientific journalism. Its role as a socio-humanitarian mediator between science and society is investigated. The coverage of natural sciences in the media is discussed as a social and humanitarian practice, its means and possible obligations are considered.

The discussed approach to socio-humanitarian mediation not only states that expectations from natural sciences in Armenian society are often unfounded, since real needs are of a socio-humanitarian nature, but also allows us to look for practical starting points for creating their relationship. The proposed approaches may lead to qualitatively new questions. For example, the realization that scientific journalism makes scientific practices public through social and humanitarian mediation raises the question of what kind of connection we want to create between society and scientific knowledge in each specific case of coverage. What

stories turn scientific knowledge into unscientific? Who talks about science and how?

From the viewpoint of this issue, the analysis of direct and indirect knowledge transfer can be considered one of the important points of the article. The discussion of the problem can be summarized as follows: indirect knowledge transfer is the practice of considering and creating social contexts of knowledge and science, a practice capable of articulating the connections between the relations of different fields.

The practical directions of journalistic activity mentioned in the article, with the help of the theoretical questions presented, can become the basis for the development of conscious journalistic obligations. In particular, the promotion of the institutionalization of the fields of science and the promotion of scientific knowledge to the public may seem to be two important, yet opposite directions, but as a journalistic activity they can be quite comparable precisely because of the functions of journalism.

Резюме

## ՐԱՏՏԿԱԶ Օ ՆԱՍԿԵ

Կակ սոցիալնո-հումանիտարնո քոսեդնիչեստվո

Մարիամ Մ. Կարապետյան

*Կանդիդատ փիլոլ. նաւկ*

**Կլյուչեւեյե սլուա** - նաւկնայ յոՐնալիստիկա, եստեւեննեյե նաւկա, սոցիոհումանիտարնայ մեդիաւսյա, սոցիոհումանիտարնայ քրակտիկա, նաւկնո յնաւո, նենաւկնո յնաւո, սոցիալիսաւսյա նաւկա, նարրատիւոն յնաւո, նենարրատիւոն յնաւո, ռեգիտիմաւսյա նաւկա.

Վ յիսկուսսիայն օ ռօլի նաւկի ու քույա եե յնաւսյա Վ Արմենիայն կրիտիկա Վ քերւոյա օչերեժ նարրաւսյա յոս յոսարստւո, օյաւսյա յնաւիչեւոնոյ յեւելիչեւոնայ ֆինանսիրօւոնայ սֆերայ նաւկի. Օժնաւո քօմիմօ օսնօւոնօյ ադրեսատայ ու եոյ ֆոնկւսյոն մօյնօ յեւելեւոնայ սոցիալիստիկայն քոսեժնայ յնաւսյա յնաւկա, յաւոստ ս մենե օչեւիժնայ ու մենե կոնքրետնայ ֆոնկւսյոնայ. Վ յնաւոյն ստաւեյե ռասսաւրիւոնայս նաւկնայ յոՐնալիստիկա, իսկուսեւսյա եե ռօլ յակ սոցիալնո-հումանիտարնօյ քոսեժնիկայ մեյժու նաւկայ ու օսեւստւօ. Օսւեւսյա յրօբլեմ եստեւեննեյե նաւկ Վ ՏՄԻ օսկուսաւսյա յակ սոցիալնո-հումանիտարնայ քրակտիկա, ռասսաւրիւոնայս իսքօլնսյեւոնայ իմի սրեժստւա ու իք յօւոնյոնայ օյաւսյա յնաւսյա.

Анализ социально-гуманитарного посредничества не только констатирует, что освещение проблем естественных наук в армянском обществе часто бывает необъективным, т.к. реальные задачи носят социально-гуманитарный характер, но и дает возможность найти практические отправные точки для создания этой взаимосвязи. Предлагаемые подходы для осуществления посредничества науки и общества могут привести к качественно новым вопросам. Например, осознание того, что научная журналистика делает публичными научную практику через социально-гуманитарное опосредование ставит вопросы о том, как мы хотим связать общество и научное знание в каждом конкретном случае, как превращается научное знание в ненаучное, кто и как рассказывает о науке.

С точки зрения поднятых вопросов проведение анализа способов прямой и косвенной передачи знаний можно считать одной из целей статьи. Обсуждение проблемы можно представить следующим образом: опосредованная передача знаний есть практика рассматривания и создания социальных контекстов знаний и науки, практика, способная осуществлять связь между разными областями науки.

Рассмотренные в статье практические направления журналистской деятельности, обоснованные теоретически, могут стать основой для разработки конкретных журналистских функций. В частности, способствование институционализации областей науки и распространение среди общественности научных знаний могут стать двумя важными, но противоположными направлениями, однако в качестве журналистской деятельности они могут быть вполне сопоставимы именно благодаря осуществлению функций журналистики.

## REFERENCES

1. **Abushenko V. L.**, Mishel' Fuko I jego kniga, Mishel' Fuko: Arxeologija znanija, <https://gtmarket.ru/library/basis/6850/6856> (30.01.22) **(In Russian)**.
2. **Bayadyan H.**, Heghap'okhut'yun, <https://hetq.am/hy/article/6736> (30.01.22) **(In Armenian)**.
3. **Bayadyan H.**, Teghekatvakan yev haghordakts'akan tekhnologianerë Hayastanum, <https://hetq.am/hy/article/2142> (20.08.21) **(In Armenian)**.
4. **Hayzenberg V.**, Fizika yev p'ilisop'ayut'yun, Yer., "Ankyunak'ar", 2016 **(In Armenian)**.
5. **Karapetyan M.**, Aylëtrank'ayin havaknut'yunnerë mediyum, "Zhuřnalistika yev haghordakts'ut'yun. Tesut'yan yev patmut'yan harts'er", Yer., YEPH hrat., 2020, N 3 (15), ëj 28-54 **(In Armenian)**.



6. **Karapetyan M.**, Haghordakts'ut'yan vocher yev mediahaghordakts'ut'yun, Yer., Heghinakayin hrat., 2020 **(In Armenian)**.
7. **Karapetyan M.**, Hasarakakan hastatut'yunner yev media. himnakhndirner, "Zhurnalistika yev haghordakts'ut'yun. Tesut'yan yev patmut'yan harts'er", Yer., YEPH hrat., 2018, N 1 (13), ěj 16-40 **(In Armenian)**.
8. **Kun T.**, Gitakan heghap'okhut'yunneri karuts'vatsk'ě, Yer., "Zangak-97", 2004 **(In Armenian)**.
9. **Liotar Zh.-F.**, Sostojanije postmoderna, M., Institut eksperimental'noj sociologii, Sankt-Peterburg, "ALETEJJA", 1998 **(In Russian)**.
10. **Ven P.**, Fuko. Jego mysl' I lichnost' /Per. s fr. A. V. Shestakova, SPb, "Vladimir Dal'", 2013 **(In Russian)**.